2011

ՀՀ կենտրոնական բանկի
բանբեր

1-ին
եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 4

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 17

Ֆինանսական համակարգի ցուցանիշներ 25

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 31

ՀՀ միջազգային պահուստների վիճակը և կազմը 32

ՀՀ ֆինանսական համակարգը 2011 թվականի առաջին եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԸ

31.03.2011թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 411 մասնաճյուղերով:

2011 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների աճ: Տնտեսության ակտիվության վերականգնմանը զուգընթաց, հաշվետու եռամսյակում բանկային համակարգը վարկային շուկայում գործել է բավականին ակտիվ:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալն ավելացել է 5.1 %-ով (16.1 մլրդ դրամով) և կազմել 335.1 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված կանոնադրական կապիտալի և չբաշխված շահույթի ավելացմամբ (համապատասխանաբար՝ 7.2 մլրդ դրամ և 8.1 մլրդ դրամ): Կանոնադրական կապիտալը ամբողջությամբ համալրվել է 1 բանկի կողմից, ընդ որում՝ միայն արտաքին աղբյուրների հաշվին:

Եռամսյակի ընթացքում համակարգն ապահովել է 8.1 մլրդ դրամի չափով զուտ շահույթ:

31.12.2010թ. համեմատ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 20.2%:


Դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել 21.3%՝ պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ ռիսկով կշռված ակտիվների առաջանցիկ աճով (ինչը դեռևս նախորդ տարվա չորրորդ եռամսյակից բանկերի իրականացրած ակտիվ վարկային քաղաքականության շարունակականության արդյունք է):

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 6.5 %-ով (80.3 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 321.9 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 35.6 մլրդ դրամ և ավանդների (ֆիզիկական ու իրավաբանական անձանց ժամկետային և ցպահանջ պարտավորություններ) 44.2 մլրդ դրամ աճով: Ընդհանուր պարտավորությունների աճ արձանագրվել է 14 բանկում, իսկ նվազում՝ 7 բանկում:

Պարտավորությունների կազմում հիմնականում նվազել են բանկերում թղթակցային հաշիվները՝ 36.4%-ով կամ 4.2 մլրդ դրամով:

Առևտրային բանկերի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ (ներառյալ ԿԲ), 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ, 9. Այլ պարտավորություններ

31.03.2011թ. դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր ավանդների մեծությունը կազմել է 717.3 մլրդ դրամ: Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 6.3%-ով կամ 25.8 մլրդ դրամով, իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները՝ 6.9%-ով կամ 18.5 մլրդ դրամով:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային ավանդները եռամսյակի ընթացքում ավելացել են 3.3 %-ով կամ 6.7 մլրդ դրամով, իսկ արտարժութային ավանդները՝ 8.0 %-ով կամ 37.6 մլրդ դրամով: Արդյունքում՝ դրամային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում նվազել է 1 տոկոսային կետով և կազմել 29.4 %:

Եռամսյակի ընթացքում պարտավորությունների կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Դիտարկվող ժամանակաշրջանում առևտրային բանկերի ընդհանուր ակտիվներն աճել են 6.2 %-ով (96.5 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 656.9 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում 16 բանկում արձանագրվել է ակտիվների աճ, իսկ 5 բանկում՝ նվազում:

Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը)՝ 9.9%-ով (91.2 մլրդ դրամով), ԿԲ-ում դրամական հաշիվները 22.3 %-ով (32.5 մլրդ դրամով):


Եռամսյակի ընթացքում հիմնականում նվազել են բանկերում դրամական հաշիվները՝ 16.9%-ով (10 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի ակտիվների ծավալները




Առևտրային բանկերի ակտիվների կառուցվածքը

31.12.2010



31.03.2011



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկատմամբ
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Իրավաբանական անձանց վարկերն ավելացել են 14%-ով (72.8 մլրդ դրամով), ֆիզիկական անձանց վարկերը՝ 6.0%-ով (19.6 մլրդ դրամով), լիզինգն ու ֆակտորինգը՝ 40.9%-ով (13.2 մլրդ դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են 34.9%-ով (14.4 մլրդ դրամով):


31.03.2011թ. դրությամբ բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (առանց լիզինգի և ֆակտորինգի) կազմել է 966.6 մլրդ դրամ, որի 61.4%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, 35.8%-ը՝ ֆիզիկական անձանց, 2.8%-ը՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին:

Առևտրային բանկերի ընդհանուր վարկերը և դեբիտորական պարտքերը (ներառյալ միջբանկային ավանդներն ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) հաշվետու եռամսյակում ավելացել են 8.2%-ով (83.9 մլրդ դրամով) և կազմել 1 տրլն 107.9 մլրդ դրամ: Դրամով վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 4.1 %-ով և կազմել 447.7 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 11.2 %-ով և կազմել 660.2 մլրդ դրամ: Արդյունքում՝ ընդհանուր վարկային ներդրումներում և դեբիտորական պարտքերում դրամով ներդրումների տեսակարար կշիռը նվազել է 1.6 տոկոսային կետով և կազմել 40.4%:


Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ավելացել են 21.2%-ով, իսկ ռեզիդենտներին տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 7.3 %-ով և կազմել են համապատասխանաբար 82.5 մլրդ դրամ և 1 տրլն 25.3 մլրդ դրամ:

Ռեզիդենտների վարկերում առավել մեծ է եղել արդյունաբերության, առևտրի և սպառողական վարկերի աճը (համապատասխանաբար 17.3 մլրդ դրամով, 15.2 մլրդ դրամով և 14.4 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները ըստ տնտեսության ճյուղերի



Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

Ռեզիդենտների վարկային ներդրումների կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել. ամենամեծ տեսակարար կշիռն ունեն արդյունաբերության, առևտրի և սպառողական վարկերը՝ համապատասխանաբար 21.6%, 19.5% և 17.4%:

Առևտրային բանկերի ստանդարտ ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 96.8%-ը:

31.03.2011 թ. դրությամբ բանկային համակարգի «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 1.9%-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.8%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6 %-ը (31.12.2010թ. դրությամբ՝ համապատասխանաբար 1.1 %, 1.1%, 0.6%):

Առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը եռամսյակի ընթացքում նվազել է 0.6 տոկոսային կետով, իսկ ընթացիկ իրացվելիության ցուցանիշը աճել է 5.7 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել են 28.9% և 137.2%:


ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2011թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված ըստ վերահսկողական հաշվետվությունների, կազմել է 8.1 մլրդ դրամ[1], շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների՝ 2.0%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 9.9%: Շահույթով է աշխատել 18 բանկ, վնասով՝ 3 բանկ:

ՖՀՄՄ համաձայն՝ բանկային համակարգի զուտ շահույթը 2011 թվականի առաջին եռամսյակում կազմել է 9.4 մլրդ դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 2.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի՝ 11.6%:

Առևտրային բանկերն ապահովել են ընդհանուր 63.5 մլրդ դրամ համախառն եկամուտ՝ միաժամանակ իրականացնելով 53.4 մլրդ դրամ համախառն ծախսեր (վերահսկողական հաշվետվությունների հիման վրա): Ըստ 2011թ. առաջին եռամսյակի արդյունքների՝ բանկային համակարգի շահույթը մինչև հարկումը կազմել է 10.1 մլրդ դրամ:

Առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կառուցվածքը 2011 թ. առաջին եռամսյակում



Տոկոսային եկամուտների գերակշիռ մասը՝ 78.4%-ը, բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտներին:

Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռներ են ունեցել ստացված միջնորդավճարներից եկամուտները, արտարժույթի առք ու վաճառքից եկամուտները՝ համապատասխանաբար 44.3% և 28.1%:

Տոկոսային ծախսերի կազմում զգալի տեսակարար կշիռը՝ 47.4%-ը, բաժին է ընկել ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներին:

[1] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների հիման վրա և ՖՀՄՄ համաձայն հաշվարկված շահույթի մեծությունների խոշոր տարբերության հիմնական պատճառը ստանդարտ ակտիվների 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելն է, քանի որ բանկերը այդչափով ծախս են ճանաչում:

Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 44.3%-ը, բաժին է ընկել բանկային համակարգի աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:


Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր զուտ մասհանումների[2] մեծությունը կազմել է 3.5 մլրդ դրամ: 31.12.2010թ. համեմատ զուտ մասհանումների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը նվազել է 0.4 տոկոսային կետով և կազմել 0.2%:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ


31.03.2011թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել է 31 վարկային կազմակերպություն՝ 65 մասնաճյուղերով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակի ընթացքում ավելացել են 16.8%-ով (14.7 մլրդ դրամով) և կազմել 101.8 մլրդ դրամ: Ակտիվների աճ է արձանագրվել 26, իսկ նվազում՝ 5 վարկային կազմակերպությունում:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ըստ տնտեսության ճյուղերի



Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումներն ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 9. Հիփոթեքային վարկեր, 10. Այլ ճյուղեր

2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալը աճել է 6.8%-ով կամ 4.1 մլրդ դրամով և կազմել է 63.6 մլրդ դրամ: Դրամով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը ավելացել է 9.0%-ով (3.3

[2] Զուտ մասհանումները «Մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին» ծախսային և «Վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից» եկամտային հոդվածների տարբերությունն է, և վերլուծական նպատակով հիմնականում օգտագործվում է «զուտ մասհանումներ» ցուցանիշը: Տարվա ընթացքում նույն ակտիվի դասի վատացմանը և լավացմանը զուգընթաց ավելանում են համապատասխանաբար «Մասհանումներ» և «Վերադարձ» հոդվածները, ըստ որի էլ բացատրվում է համախառն ծախսերում և համախառն եկամուտներում վերջիններիս զգալի տեսակարար կշիռները:

մլրդ դրամով), արտարժույթով տրամադրված վարկերի և լիզինգի ծավալը՝ 3.2 %-ով (726.6 մլն դրամով): Արդյունքում՝ դրամային վարկերի և լիզինգի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում և լիզինգում աճել է 1.2 տոկոսային կետով և կազմել է 63%:

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ավելացել են 8.4%-ով և կազմել 44.2 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերը ավելացել են 2.1 %-ով և կազմել են 12.8 մլրդ դրամ: Լիզինգի ծավալը չի փոփոխվել՝ եռամսյակի վերջին կազմել է 4.6 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դեբիտորական պարտքերի ընդհանուր ծավալը ավելացել է 14.6%-ով (11.3 մլրդ դրամով)՝ եռամսյակի վերջին կազմելով 88.5 մլրդ դրամ: Վարկային ներդրումների աճը հիմնականում պայմանավորվել է ֆինանսական հատվածի և գյուղատնտեսության վարկերի աճով (համապատասխանաբար 6.0 մլրդ դրամ և 3.7 մլրդ դրամ):

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում «ստանդարտ» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել է 96.4%:

31.03.2011 թ. դրությամբ վարկային կազմակերպությունների «հսկվող» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.4 %-ը, «ոչ ստանդարտ» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6%-ը, «կասկածելի» դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.6 %-ը (31.12.2010 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 1.5 %, 0.7%, 0.8%):

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը աճել է 15.6%-ով (5.6 մլրդ դրամով) և կազմել է 41.4 մլրդ դրամ, ընդ որում՝ կապիտալի աճը ապահովվել է ինչպես կանոնադրական կապիտալի աճի, այնպես էլ չբաշխված շահույթի աճի հաշվին: Կանոնադրական կապիտալը աճել է 9.0%-ով (2.5 մլրդ դրամով)՝ պայմանավորված 4 վարկային կազմակերպությունների կողմից 2 մլրդ 527 մլն դրամով կանոնադրական կապիտալի համալրմամբ:

Վերահսկողական հաշվետվությունների համաձայն՝ 2011թ. առաջին եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների կուտակած զուտ շահույթը կազմել է 3.1 մլրդ դրամ: Տարեսկզբից շահույթով են աշխատել 23, իսկ վնասով՝ 8 վարկային կազմակերպություն:

ՖՀՄՄ համաձայն՝ վարկային կազմակերպությունների զուտ շահույթը 2011 առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 1.4 մլրդ դրամ:

Ընդհանուր պարտավորությունները ավելացել են 17.7%-ով (9.1 մլրդ դրամով) և եռամսյակի վերջին կազմել են 60.3 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել բանկերի նկատմամբ պարտավորությունների՝ 69.2%-ով կամ 6.9 մլրդ դրամով աճի և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների՝ 21.9%-ով կամ 2.9 մլրդ դրամով աճի հաշվին:

Վարկային կազմակերպությունների պարտավորությունների ընդհանուր կառուցվածքում 8.6 տոկոսային կետով աճել է բանկերի նկատմամբ պարտավորությունների տեսակարար կշիռը, փոխարենը նվազել են այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ և ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները՝ համապատասխանաբար 4.7 և 1.9 տոկոսային կետով: Արդյունքում՝ պարտավորությունների կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն պարտավորությունները բանկերի, այլ ֆինանսական կազմակերպությունների և իրավաբանական անձանց նկատմամբ՝ համապատասխանաբար 28.2%, 21.5% և 26.4%:

Տեղեկանք


2011 թվականի առաջին եռամսյակի վերջին ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքի վերաբերյալ

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[1] 2011 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 619.5 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 565.6 մլն դոլարի փոխարեն: Եռամսյակի ընթացքում առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները արտաքին աշխարհից ներգրավել են 249.2 մլն դոլար վարկային միջոցներ՝ նախկինում ձեռք բերած վարկերի դիմաց կատարել են 184.8 մլն դոլարի հիմնական գումարի մարումներ[2]:

2011 թվականի առաջին եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են՝ Լյուքսեմբուրգը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 12.8 % (նախորդ եռամսյակում՝ 13.2%), Ռուսաստանը՝ 12.6 % (նախորդ եռամսյակում ևս՝ 12.6 %), Գերմանիան՝ 7.1 % (նախորդ եռամսյակում՝ 7.9 %), Նիդեռլանդները՝ 7.1% (նախորդ եռամսյակում՝ 7.8 %), Ֆրանսիան՝ 6.9 % (նախորդ եռամսյակում՝ 7.6 %): Վարկերի մոտ 28 %-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

2011 թվականի առաջին եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի վերջի համեմատ նվազել է և կազմել 5.4 % (նախորդ եռամսյակի վերջի 5.6 %-ի փոխարեն): Արտաքին վարկերի մոտ 61.6%-ը լողացող (LIBOR, EURIBOR, ՊՊ) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը 4.4 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռը մի փոքր աճել է և կազմել ներգրավված վարկերի 13.4 %-ը:

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքի դինամիկան 2004-2011 թվականներին



[1] *Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

[2] *Նախորդ ժամանակահատվածի վերջի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում գուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրաված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ինչի հետևանքով դրանք դոլարային համարժեքի վերածելիս պարունակում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.03.2011 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 9 ապահովագրական ընկերություններ:

Հաշվետու եռամսյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվներն ավելացել են 24.8%-ով՝ 31.03.2011 թ. դրությամբ կազմելով 31.9 մլրդ դրամ, պարտավորություններն ավելացել են 30.9%-ով՝ կազմելով 17.0 մլրդ դրամ, ընդհանուր կապիտալն ավելացել է 18.6%-ով՝ կազմելով 14.9 մլրդ դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել ավանդները բանկերում (49.9% տեսակարար կշիռ), արժեթղթերում ներդրումները (10.7% տեսակարար կշիռ) և ուղղակի ապահովագրության գծով ապահովադիրներից ստացվելիք գումարները (9.9% տեսակարար կշիռ):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են կազմել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (68.5% տեսակարար կշիռ), պահանջների պահուստները (9.4% տեսակարար կշիռ) և վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարները (7.1% տեսակարար կշիռ):

31.03.2011 թ. դրությամբ ապահովագրական ընկերությունների շահույթը կազմել է 1.0 մլրդ դրամ:

ՖՀՄՄ համաձայն՝ ապահովագրական ընկերությունները 2011 թվականի առաջին եռամսյակում աշխատել են 814.3 մլն դրամ շահույթով:

Հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 12.6 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 346.4 մլն դրամ կամ ապահովագրավճարների 3.5%-ը:

Դիտարկվող ժամանակաշրջանում հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 1.2 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումների գումարները՝ 203.8 մլն դրամ կամ ապահովագրական հատուցումների 17.6%-ը:

31.12.2010 թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել են 383.7 հազար գործող ապահովագրության պայմանագիր, որոնց ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 6.9 տրլն դրամ: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը կազմել է 2.6 տրլն դրամ կամ ապահովագրական գումարների 37.7%-ը:


ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2011 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություններ մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն: Ներդրումային ծառայություն մատուցող ընկերություններից յոթը կարող են իրենց կամ հաճախորդի անունից և իրենց կամ հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ իրականացնել և հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականներ ընդունել և հաղորդել, հինգը՝ կարող են նաև արժեթղթերով ներդրումների հետ կապված խորհրդատվություն տրամադրել, վեցը՝ իրականացնել արժեթղթերի տեղաբաշխման գործունեություն և երեքը՝ արժեթղթերի փաթեթի կառավարում:

31.03.2011 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 18.6 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 5%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը 2010 թվականի վերջի համեմատ ավելացել է 9%-ով՝ կազմելով 3.5 մլրդ դրամ:

2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առքուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 12%-ով՝ կազմելով 90.1 մլրդ դրամ: Կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 94%-ով և կազմել 228 մլն դրամ: Բաժնետոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը ավելացել է 59%-ով՝ կազմելով 3.2 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով առք ու վաճառքի գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 10%-ով և կազմել է 86.7 մլրդ դրամ: 2011 թ. առաջին եռամսյակի արդյունքներով՝ ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ գերակշռել են պետական պարտատոմսերով գործառնությունները, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր շրջանառության մեջ կազմել է 96.2%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 0.3% և 3.5%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2011 թ. առաջին եռամսյակում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջին ժամկետայնության պարտատոմսերով իրականացված գործառնությունները (կազմել են պետական արժեթղթերով գործառնությունների 40.3%-ը): Պետական կարճաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 32.9% և 26.8%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 2%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 7%-ով և կազմել 4.2 մլրդ դրամ, ընդ որում՝ շրջանառության 52%-ը կազմել են ռեպո գործառնությունները, 2.5%-ը՝ կորպորատիվ պարտատոմսերի և 43.4%-ը՝ պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունները:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում իրականացված գործառնությունների մեջ 94%-ը կազմել են ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի կողմից իրականացված գործառնությունները, 6%-ը՝ ներդրումային ընկերությունների կողմից իրականացված գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 1.1%-ով և կազմել 427.6 մլրդ դրամ, որից 209.2 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

31.03.2011 թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 2.0 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ նվազելով 39%-ով:

2011 թ. մարտի 31-ի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 1567 ընկերություն, իսկ ՀԿԴ-ում ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 106597 մարդ:

31.03.2011 թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 15 թողարկողների 19 արժեթղթեր,այդ թվում՝ 12 բաժնետոմս (11 թողարկողի) և 7 պարտատոմս (5 թողարկողի): Թողարկողներից 4-ը բանկ են: Ընդ որում, բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 32.4 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ծավալը՝ 4.4 մլրդ դրամ: Թողարկողներից մեկը հաշվետու է ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով: Թողարկված պարտքային արժեթղթերի 13%-ը բաժին է ընկել առևտրային բանկերին, իսկ վերջիններիս մասնակցությունը բաժնային արժեթղթերում կազմել է 38%:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկը 2011 թվականի առաջին եռամսյակում ՀՀ Կառավարություն է ներկայացրել.

1. ***««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նախագծերը:***

- Նախագծերի նպատակն է լուծել գրավի առարկա գույքի բռնագանձման ժամանակ առաջացող հարկային խնդիրները, որոնք առաջադրվել են ինչպես ՀՀ վարչապետի մոտ կայացած ֆինանսատնտեսական կոմիտեի նիստում, այնպես էլ շահագրգիռ գերատեսչությունների հետ քննարկումների ժամանակ:

  Գործող հարկային օրենսդրության շրջանակներում գրավադրված գույքը բանկին ի սեփականություն վերցնելը՝ հետագա իրացման նպատակով, դիտվում է իբրև գրավատուի կողմից այդ գույքի իրացում, որն առաջացնում է եկամտահարկի վճարման պարտավորություն:

  Բանկը, հանդես գալով որպես հարկային գործակալ, ստիպված է լինում իր միջոցների հաշվին վճարելու եկամտահարկը, քանի որ գրավի առարկայի հետագա իրացումը թույլ չի տալիս ծածկել ինչպես գրավով ապահովված պարտավորությունը, այնպես էլ վերոհիշյալ հարկի գումարը:
- Նախագծով սահմանվում է գրավ դրված գույքի՝ արտադատական կարգով բռնագանձման և իրացման արդյունքում ֆիզիկական անձի ստացած եկամուտների հարկման նոր մեխանիզմ:
- Նախագծով գրավատուի կողմից գույքն օտարելուց ստացված եկամուտ է համարվում գրավ դրված գույքի իրացման գնի և գրավով ապահովված պարտավորության չափի տարբերությունը:
- Եկամտահարկը գանձվում է վարկառուից՝ պարտավորությունները բանկի առջև մարելուց հետո մնացած գումարից:
- Նախատեսվել է ***«գույքի իրացման գնի»*** որոշման 3 հնարավոր տարբերակ.
  1) ***Տարբերակ 1*** - Գրավադրված գույքը բանկին ի սեփականություն անցնելու օրվանից ***6 ամսվա ընթացքում օտարվում է*** երրորդ անձի: Այս դեպքում գույքի իրացման գին է համարվում բանկի

կողմից գույքի *օտարման գինը*, իսկ այն դեպքում, երբ օտարման գինը ողջամիտ չհամարվող չափով ցածր է այդ գույքի շուկայական արժեքից, ապա որպես գույքի իրացման գին է համարվում այդ *գույքի շուկայական արժեքը*:

2) ***Տարբերակ 2*** - Բանկը ***չի օտարել*** գույքը իրեն ի սեփականություն անցնելու օրվանից 6 ամսվա ընթացքում: Այս դեպքում գույքի իրացման գին է համարվում 6-ամսյա ժամկետի վերջին օրվա դրությամբ *գույքի շուկայական արժեքը*:

3) ***Տարբերակ 3*** – Բանկի և գրավատուի միջև նախապես կնքված գրավոր պայմանագրով: Անձինք կարող են պայմանավորվել, որ գույքը հետագայում բանկին ի սեփականություն անցնելու դեպքում օտարելու գին է համարվելու բանկին ի սեփականություն անցնելու օրվա դրությամբ որոշվող շուկայական գինը:

2. *««Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և ««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:*

Նախագծերի ներկայացումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի թիվ 97-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1768-Ն որոշմամբ:

Նշված օրենքի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոների կողմից ամբողջական վարկային զեկույց պատրաստելու նպատակով օրենսդրական խնդիրների վերացման, ինչպես նաև վարկատու կազմակերպություններում վարկային պատմություն չունեցող անձանց համար վարկային տեղեկատվության ձևավորման և զարգացման անհրաժեշտությամբ:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններով նախատեսվել են, որ հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների կողմից իրենց հաճախորդների վերաբերյալ վարկային տեղեկատվության (հեռախոսային խոսակցության արդյունքում ձևավորված պարտքերը) տրամադրումը վարկային բյուրոյին չի համարվում անձի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում:

Փոփոխության արդյունքում հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորներն իրավունք կունենան իրենց հաճախորդների պարտքերի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու վարկային բյուրոներին: Սակայն այդ տեղեկատվությունը կարող է տրամադրվել վարկային բյուրոյի և հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների միջև ձեռք բերված համաձայնության արդյունքում՝ հեռահաղորդակցման ոլորտում գործունեություն իրականացնող օպերատորների կողմից իրենց հաճախորդներին նախապես տեղեկացնելով, որ հնարավոր է՝ իրենց վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվի վարկային բյուրոյին:

««Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո վարկային բյուրոն պարտավոր է վարկային զեկույցում ընդգրկել տեղեկատվություն այն մասին, թե որ տիպի սուբյեկտից ստացված տվյալների արդյունքում է ձևավորվել վարկային բյուրոյում առկա տեղեկությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսուհետ վարկային բյուրոն հավաքագրելու է ոչ միայն ֆինանսական կազմակերպությունների, այլ նաև այլ սուբյեկտների հաճախորդների վերաբերյալ տեղեկատվություն: Այսինքն՝ վարկային զեկույցում վարկային բյուրոն պետք է նշի, որ տվյալ տեղեկատվությունը ձևավորվել է բանկերից, վարկային կազմակերպություններից կամ, օրինակ՝ կոմունալ ծառայություններ մատուցող սուբյեկտներից ստացված տեղեկատվության հիման վրա: Իսկ անհրաժեշտության դեպքում վարկային զեկույցում ներառվող տվյալների ցանկը կսահմանի ՀՀ կենտրոնական բանկը՝ ապահովելու համար բոլոր բյուրոների կողմից ներկայացվող վարկային զեկույցների միատեսակ ձևն ու բովանդակությունը:

2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում: Մասնավորապես՝ բանկային համակարգի կարգավորման դաշտում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում սահմանվել է.

- Նշանակալից մասնակցություն ձեռք բերելիս նշանակալից մասնակիցը Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերում նշում է բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում ֆինանսական օժանդակություն տրամադրելու իր պատրաստակամության կամ բացասական վերաբերմունքի մասին:
- Բանկի խորհրդի նախագահը և անդամները իրենց գործունեության հետագա տարիների ընթացքում, որակավորման ստուգման նպատակով, կարող են հրավիրվել լրացուցիչ հարցազրույցի Կենտրոնական բանկի խորհրդի նիստում:
- Բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավարը (աշխատակիցը) համարվում է բանկի ղեկավար, ինչպես նաև վերջինիս որակավորման և գրանցման կարգը նույնացվել է բանկի մյուս ղեկավարների որակավորման և գրանցման կարգի հետ:

Այս փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի բանկի ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում օգտագործել նշանակալից մասնակիցների կողմից տրամադրվող լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները և բարելավել բանկի ֆինանսական դրությունը: Բացի այդ, կնույնացվեն բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի (աշխատակցի) և բանկի այլ ղեկավարների որակավորման և գրանցման ընթացակարգերը:

2. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ֆինանսական հաստատությունների համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ» կանոնակարգում իրականացվել է փոփոխություն, ըստ որի՝ բանկի ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի (աշխատակցի) պարտականությունները չեն կարող դրվել բանկի ներքին աուդիտի ղեկավարի (անդամի) վրա:
3. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել է «Առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգը», որի նպատակն է սահմանել առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և վարման կարգը, առարկայազուրկ մետաղական հաշիվներով թույլատրվող գործառնություններն ու սահմանափակումները: Մասնավորապես, սահմանվել է, որ.
   - Առարկայազուրկ մետաղական հաշիվը ցպահանջ կամ ժամկետային հաշիվ է, որը կարող է բացվել ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Այն նախատեսված է անկանխիկ ոսկու (միայն 999.5 և 999.9 հարգի) հաշվառման համար, ընդ որում համար նշվում է միայն ոսկու հարգը և կշիռը:
   - Մետաղական հաշիվները չեն համարվում բանկային ավանդ և չեն երաշխավորվում:
   - Բանկերը մետաղական հաշիվների բացման և վարման ծառայություններ մատուցելու համար պարտավոր են ստանալ Կենտրոնական բանկի թույլտվությունը՝ ներկայացնելով համապատասխան ներքին իրավական ակտերը և այլ փաստաթղթեր:
   - Բանկերը մետաղական հաշիվներով չեն կարող իրականացնել կարգում նշված գործառնություններից բացի այլ գործառնություններ, այդ թվում՝ մետաղական հաշվի վարկավորում, ինչպես նաև մետաղական հաշիվների համալրում կամ ելքագրում ոչ դրամական միջոցներով:
4. Փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում.
   - Մետաղական հաշիվներն ընդգրկվում են կապիտալի համարժեքության նորմատիվի կազմում ներառվող արտարժութային ռիսկի հաշվարկում:
   - 999 հարգից ոչ պակաս ոսկու ստանդարտացված ձուլակտորների համար սահմանվել է 50% ռիսկի կշիռ:
   - Մետաղական հաշիվներով ներգրավվող միջոցները, բացառությամբ թղթակցային հաշիվների, ենթակա են պահուստավորման Կենտրոնական բանկում՝ ամբողջությամբ ՀՀ դրամով:
   - Բանկերի կողմից արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում իրականացվող պարտադիր պահուստավորումը, որի նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 12 տոկոսի չափով, 9%-ով իրականացվում է ՀՀ դրամով և 3%-ով՝ արտարժույթով:
5. «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում կատարվել են փոփոխություններ, ըստ որի՝ հաշվետվությունների ձևերը և լրացման կարգը համապատասխանեցվել են «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում կատարված փոփոխություններին: Կանոնակարգում փոփոխվել է նաև «Հաշվետվություն վարկային ներդրումների, դեբիտորական պարտքերի և ինվեստիցիոն արժեթղթերի վերաբերյալ» թիվ 6 հաշվետվության մեջ ներառվող ցուցանիշների ճյուղային բացվածքը: Առաջարկվող բացվածքն անհրաժեշտ է արտադրական եղանակով ՀՆԱ-ի հաշվարկման ընթացքում ֆինանսական միջնորդության՝ անուղղակիորեն չափվող ծա-

ռայությունների (FISIM) ճշգրիտ հաշվարկման համար: Հաշվետվության մեջ օգտագործված ճյուղային դասակարգումն իրականացվում է համաձայն «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչները» ձեռնարկի երկրորդ խմբագրության:

6. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նոր խմբագրությամբ է հաստատվել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության կարգը», որով հստակեցվել են բանկերի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձի նկատմամբ ներկայացվող չափանիշները: Մասնավորապես, սահմանվել է, որ.
   - Աուդիտորական կազմակերպությունը պետք է ունենա բանկի կամ ապահովագրական ընկերության աուդիտի իրականացման առնվազն 5 տարվա փորձ, ընդ որում՝ այս պահանջը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա:
   - Աուդիտորական կազմակերպությունը բանկի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Կենտրոնական բանկի հրավերով մասնակցել բանկի, աուդիտորական կազմակերպության և Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:
   - Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ բանկի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի բարեփոխումների նպատակով 2011 թվականի առաջին եռամսյակում ընդունվել և փոփոխություններ ու լրացումներ են կատարվել հետևյալ իրավական ակտերում.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 01.03.2011թ. թիվ 40-Ն որոշմամբ հաստատվել է «Ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձին ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 3/11-ը, համաձայն որի՝ ապահովագրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտ իրականացնողի նկատմամբ սահմանվել են նվազագույն պահանջներ՝ որակյալ և պատշաճ աուդիտի իրականացում ապահովելու համար:
2. ՀՀ ԿԲ խորհրդի 26.06.2007թ. թիվ 197-Ն որոշմամբ ընդունված «Ապահովագրական բրոքերների հաշվետվությունների ձևը, տեղեկատվության կազմը և ներկայացման կարգն ու ժամկետները» կարգում կատարվել են փոփոխություններ, համաձայն որոնց՝ ապահովագրական բրոքերների կողմից ստացվող տեղեկատվության անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով ապահովագրական բրոքերները ՀՀ ԿԲ չեն ներկայացնի ֆինանսական հաշտարարի գրասենյակի օգտին պարտադիր վճարների վերաբերյալ հաշվետվությունը:
3. ՀՀ ԿԲ խորհրդի 29.06.2010թ. թիվ 150-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգն ու ժամկետները» կարգում կատարվել են փոփոխություններ և լրացումներ: Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների՝ ԱՊՊԱ ոլորտում իրականացրած գործունեության նկատմամբ վերահսկողության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվել է նոր հաշվետվական ձև՝ Բյուրոյի կողմից հայտնաբերված խախտումների և կիրառված պատասխանատվության միջոցների վերաբերյալ:
4. ՀՀ ԿԲ խորհրդի 30.10.2007թ. թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական բրոքերային գործունեության լիցենզավորումը, ապահովագրական գործակալի հաշվառումը, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղի և ներկայացուցչության գրանցումը, ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ապահովագրական ընկերության գործունեության գործարար ծրագրի ներկայացման ձևը, կարգը և ժամկետները, ապահովագրական ընկերության և ապահովագրական բրոքերային ընկերության ղեկավարների ու պատասխանատու անձանց որակավորումը, ապահովագրական ընկերության ղեկավարներին, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց ներկայացվող մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշները, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը, ապահովագրական ընկերության ղեկավարների, ապահովագրական բրոքերի պատասխանատու անձանց թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 3/01-ում կատարվել է փոփոխություն: Փոփոխության արդյունքում

կապահովվի «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցվող ապահովագրական ընկերություններին:

Արժեթղթերի շուկայի գործունեության կարգավորման դաշտում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. ՀՀ ԿԲ խորհրդի 01.03.2011թ. թիվ 42-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատվել է «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը, որի նպատակն է ոչ ֆինանսական կազմակերպություն հանդիսացող հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնողի նկատմամբ սահմանել այնպիսի նվազագույն պահանջներ, որոնք համահունչ կլինեն հաշվետու թողարկող չհանդիսացող ֆինանսական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտն իրականացնողի համար սահմանված նվազագույն պահանջների սկզբունքներին:
2. ՀՀ ԿԲ խորհրդի 01.03.2011թ. թիվ 41-Ն որոշմամբ հաստատվել է «Ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/11-ը, որի նպատակն է ներդրումային ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության արտաքին աուդիտ իրականացնողի նկատմամբ սահմանել այնպիսի նվազագույն չափանիշներ, որոնք կապահովեն ներդրումային ընկերությունների որակյալ և պատշաճ աուդիտի իրականացումը:
3. ՀՀ ԿԲ խորհրդի 01.03.2011թ. թիվ 43-Ն որոշմամբ լրացում է կատարվել «Արժեթղթերի պահառության գործունեությունը» կանոնակարգ 33-ում, որի նպատակն է հնարավորություն տալ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց ապահովելու իրենց հաճախորդներին պատկանող օտարերկրյա արժեթղթերի առանձնացված հաշվառումը՝ առանց օտարերկրյա պահառուի մոտ անվանատիրոջ հաշիվ բացելու, այն դեպքում, երբ օտարերկրյա պետության օրենսդրությունը թույլ չի տալիս ներդրումային ծառայություններ մատուցող անձին ունենալ անվանատիրոջ հաշիվներ տվյալ պետության պահառուի մոտ:
4. ՀՀ ԿԲ խորհրդի 01.03.2011թ. թիվ 44-Ն որոշմամբ հաստատվել է «Անվանատիրոջ հաշիվների վարման նկատմամբ լրացուցիչ պահանջները» կանոնակարգ 5/07-ը, որի նպատակն է ապահովել արժեթղթերի հաշվառման այնպիսի սխեմա, որի դեպքում օտարերկրյա անվանատիրոջ հաշիվներով հաշվառվող արժեթղթերի իրական սեփականատերերի մասին տեղեկությունները կարտացոլվեն հայկական պահառուի մոտ:
5. ՀՀ ԿԲ խորհրդի 29.03.2011թ. թիվ 81-Ն, 82-Ն և 80-Ն որոշումներով փոփոխություններ են կատարվել.
   - «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, ներդրումային ընկերությունների կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, բանկի, վարկային կազմակերպության կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ում:
   - «Կարգավորվող շուկայի օպերատորի գրանցումն ու լիցենզավորումը, կարգավորվող շուկայի օպերատորի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/01-ում:
   - «Կենտրոնական դեպոզիտարիայի գրանցումն ու լիցենզավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը, գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/02-ում:

Փոփոխությունների նպատակն է ներդրումային ընկերությունների, կարգավորվող շուկայի օպերատորի և Կենտրոնական դեպոզիտարիայի համար ապահովել հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրումը «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:


Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 2011 թ. առաջին եռամսյակում

2011 թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 4637 մլրդ դրամ (քանակը՝ 2055254), ընդ որում՝ ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների ծավալը կազմել է 3950 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 864671: ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 88%-ով (1850 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 28%-ով (188845-ով): ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված փոխանցումների ծավալը 2010թ. չորրորդ եռամսյակի համեմատ նվազել է 11%-ով (473 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 147149-ով (15 %-ով):

ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական ծավալը (առանց բորսայական գործառնությունների) կազմել է մոտ 62 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 13510: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը 2010թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 29 մլրդ դրամով (քանակը ավելացել է 2951-ով):

2011 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում (առանց բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումների) Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումների տեսակարար կշիռը կազմել է ընդհանուր վճարումների ծավալի 25.44%-ը, քանակի 51.86%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս նախաձեռնած փոխանցումների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է 18.2%-ով (128 մլրդ դրամով), իսկ քանակը ավելացել է 100491-ով (0.4%-ով):

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



2011թ. առաջին եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 145.6 մլրդ դրամի 2893827 գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ վճարումների ծավալը կազմել է մոտ 11.6 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 2.4 մլրդ դրամ (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 0.7 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 1.7 մլրդ դրամ): Եռամսյակի վերջի դրությամբ շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը կազմել է 777336, որը 2010թ. չորրորդ եռամսյակի վերջի համեմատությամբ ավելացել է 4%-ով (12146 քարտով): Հաշվետու եռամսյակի ընթացքում քարտերով իրականացված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է քարտային գործառնությունների մոտ 8%-ը: Ընդհա-

նուր առմամբ, քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 53%-ով (4 մլրդ դրամով):

Առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական ստացումները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 18%-ով և կազմել 121 մլրդ դրամ, իսկ արտասահման կատարված փոխանցումների ծավալը ավելացել է 9.4%-ով և կազմել 58 մլրդ դրամ: Արդյունքում՝ ֆիզիկական անձանց ուղղված դրամական միջոցների զուտ ներհոսքը կազմել է 63 մլրդ դրամ, որը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 14 մլրդ դրամով:


Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև առևտրային բանկերի հետ համագործակցության արդյունքում մատուցված ծառայությունների դիմաց հավաքագրված միջոցները կազմել են 10.9 մլրդ դրամ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2011թ. առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով[3] կատարված վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով: Համակարգի մասնակիցների էլեկտրոնային վճարումները միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 45%-ը, քանակի 96%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էլեկտրոնային վճարումների ծավալը ավելացել է 41%-ով (523 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 29%-ով (186696-ով): Առևտրային բանկերի կողմից էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի մոտ 58%-ը (2010 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 0.3%-ով), իսկ քանակի՝ մոտ 99.7%-ը:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը 2010 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 2917-ով՝ կազմելով 12933, իսկ ծավալն ավելացել է 8.1 մլրդ դրամով՝ կազմելով 28.9 մլրդ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների)




Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակում և կազմել է 2.1 մլն դրամ:

Բացի այդ, էլեկտրոնային վճարումների համակարգով բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումները 2011թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել են 9553 մլրդ դրամ, որտեղ՝ միջին օրական փոխանցումները ավելացել են 0.9 մլրդ դրամով և կազմել 149 մլրդ դրամ,

[3] Էլեկտրոնային վճարումների համակարգում բորսայական գործառնություններ իրականացնելու հետ կապված փոխանցումները չեն ընդգրկվում և դիտարկվում են առանձին:

իսկ առևտրային բանկերի կողմից բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների միջին ծավալը կազմել է 1.7 մլրդ դրամ, որը նվազել է 154 մլն դրամով:

էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական վճարումներում բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումներ



Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են վճարումների քանակի 0.007%-ը, ծավալի 0.013%-ը (61 փոխանցում՝ 1.48 մլրդ դրամ ծավալով), ընդ որում՝ անբավարար իրացվելիության պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում իրականացված վճարումների քանակի 0.001%-ը, ծավալի 0.0013%-ը (6 փոխանցում՝ 1.47 մլրդ դրամ ծավալով):

ՀԱՄԱԽՍՈՒՆ ԹՂԹԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

2011թ. առաջին եռամսյակի ընթացքում թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են ՀՀ կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների ծավալի 49.6%-ը, քանակի 4.2%-ը (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծավալն ավելացել է 2.8-անգամ, իսկ քանակը՝ 6.8%-ով):

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատվածը	Համախառն				Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով*		Բորսայական գործառնությունների հետ կապված փոխանցումներ	
	էլեկտրոնային*		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
2010										
I եռ.	1262858	640985	688950	33795	148297	1046	2100105	675826	9496297	4963
տեսակարար կշիռը վճարումներում (%)	60.13	94.84	32.81	5.00	7.06	0.15	100	100		
II եռ.	1755508	774247	1179761	35556	106883	732	3042152	810535	12614414	6364
տեսակարար կշիռը վճարումներում (%)	57.71	95.52	38.78	4.39	3.51	0.09	100	100		
III եռ.	2240052	821259	1565602	38665	163558	1005	3969211	860929	9374108	5942
տեսակարար կշիռը վճարումներում (%)	56.44	95.39	39.44	4.49	4.12	0.12	100	100		

IV եռ.	2265156	968452	1971135	42412	186706	956	4422997	1011820	10060316	5932
տեսակարար կշիռը վճարումներում (%)	51.213	95.71	44.57	4.19	4.22	0.09	100	100		
Ընդամենը	7523573	3204943	5405448	150428	605444	3739	13534465	3359110	41545135	23201
տեսակարար կշիռը վճարումներում (%)	55.59	95.41	39.94	4.48	4.47	0.11	100	100		
2011										
I եռ.	1785728	827681	1960157	36116	203913	874	3949798	864671	9553069	5432
տեսակարար կշիռը վճարումներում (%)	45.211	95.72	49.63	4.18	5.16	0.10	100	100		

** Առանց բորսայական գործառնությունների իրականացման հետ կապված փոխանցումների:*

ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 564 փոխանցում՝ 31 մլրդ դրամ ծավալով (2010 թ. առաջին եռամսյակի համեմատ փոխանցումների միջին օրական ծավալը ավելացել է 20 մլրդ դրամով), իսկ այս եղանակով մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 54 մլն դրամ, որն ավելացել է 2.6-անգամ: Համախառն թղթային վճարումների համակարգով փոխանցումները հիմնականում պայմանավորված են կնքված ռեպո գործառնություններով, ինչպես նաև վարկային հարթակում կնքված գործառնություններով:

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի կողմից հաշվետու ժամանակահատվածում պետական (գանձապետական) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով ձևավորվել է 377 հանձնարարական՝ մոտ 68 մլրդ դրամ ծավալով, ինչը 2010 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 29 մլրդ դրամով (որտեղ՝ արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված վճարումները ավելացել են 13 մլրդ դրամով, իսկ արժեթղթերի մարման հետ կապված վճարումները՝ մոտ 16 մլրդ դրամով): Ընդ որում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պետական պարտատոմսերի դիմաց մասնակիցների կողմից կատարվել է 34.4 մլրդ դրամի փոխանցում, իսկ պետական արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանի կողմից կատարվել է 34 մլրդ դրամի փոխանցում: Ընդ որում՝ «Գանձապետական պահառու» համակարգի միջոցով պետական արժեթղթերի դիմաց կատարվել է 0.6 մլրդ դրամի վճարում, որտեղ համապատասխանաբար մոտ 0.2 մլրդ դրամը կազմել են արժեթղթերի տեղաբաշխման և մոտ 0.4 մլրդ դրամը՝ արժեթղթերի մարման դիմաց վճարումները:

ՀՀ կենտրոնական բանկի սեփական արժեթղթերի մարման կամ տեղաբաշխման հետ կապված գործառնություններ չեն իրականացվել:

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի մասնակիցների կողմից երկրորդային շուկայում արժեթղթերով կատարված առք ու վաճառքի գործառնությունների դիմաց (առաքում՝ վճարման դիմաց սկզբունքով) իրականացվել է 135 մլրդ դրամի 497 փոխանցում: Նշված ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 27 մլրդ դրամով: Համակարգի միջոցով կատարված ազատ առաքման գործառնությունները անվանական արժեքով կազմել են 284 մլրդ դրամ, իսկ գրավադրման հետ կապված գործառնությունները՝ 3 մլրդ դրամ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2011 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտերի տրամադրումը կամ դրանց սպասարկումը իրականացվել է ՀՀ տարածքում գործող 20 առևտրային բանկերի կողմից: Ընդ որում՝ 19 առևտրային բանկեր անդամակցում են «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Քարտերի սպասարկման նպատակով հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել են 26 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2011 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 845: Այդ թվում՝ «ԱրՔա» վճարային քարտերի սպասարկումը իրականացվել է 786 ավտոմատ գանձման սարքավորումների միջոցով: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS- տերմինալների ընդհանուր քանակը կազմել է 3973, որից 486-ը տեղադրված է առևտրային բանկերի ստորաբաժանումներում: Տեղադրված իմպրինտերների ընդհանուր քանակը կազմել է 23:

ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից տրամադրվող (սպասարկող) քարտերի տեսակները


Բանկի անվանումը	ArCa	MASTER CARD	VISA	AMEX	Այլ քարտեր
Հայբիզնեսբանկ	+	+	+		
Անելիք բանկ	+	+	+		
Արարատ բանկ	+	+	+		+
Ամերիաբանկ	+	+	+		
ՎՏԲ-Հայաստան բանկ	+		+		
Հայէկոնոմբանկ	+	+			
Պրոմեթեյ բանկ	+	+			
ԲՏԱ բանկ	+	+			
Զարգացման հայկական բանկ	+	+			
Կոնվերսբանկ	+	+	+		+
Ինեկոբանկ	+	+			
Մելլաթ բանկ	+				
Բիբլոս բանկ Արմենիա	+	+			
Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան	+	+	+		+
ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ	+	+	+	+	
Արցախբանկ	+	+			
Առէկսիմբանկ-Գազպրոմբանկ	+	+	+		
Յունիբանկ	+	+	+		
Արդշինինվեստ բանկ	+	+	+		
Արմսվիսբանկ					
ՊրոԿրեդիտ բանկ			+		

2011 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատ ավելացել է 4%-ով (12146 քարտով) և կազմել 318216: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակը ավելացել է 8.5%-ով (35892 քարտով). VISA-ն ավելացել է 10%-ով (27096 քարտով) և կազմել 296865, իսկ MasterCard-ը՝ 9%-ով (10842 քարտով) և կազմել 126785: Միջազգային այլ քարտերի քանակը նվազել է 5%-ով (2046 քարտով):

Քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2010 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 36.83%-ով (39 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 26%-ով (592166):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 1227235 գործառնություն՝ 48 մլրդ դրամ ծավալով: «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է մոտ 9.5%-ով (4 մլրդ դրամով), իսկ քանակը՝ 8.8%-ով (99060-ով):

«ԱրՔա» վճարային քարտերի զարգացման դինամիկան



VISA քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 60 մլրդ դրամ (955134 գործառնություն), իսկ MasterCard-ով իրականացվել է 21.5 մլրդ դրամ ծավալով 453269 գործառնություն: VISA համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը 2010 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 54%-ով (21 մլրդ դրամ ծավալով), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալը՝ 46%-ով (6.8 մլրդ դրամ ծավալով):

Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործարքները (2011 թ. առաջին եռամսյակ)


Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում «ԱրՔա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	113379	2438609	40030	1065448
այդ թվում՝ անկանխիկ	466	35963	49	19155
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	29933	345482	6912	118440
այդ թվում՝ անկանխիկ	8810	232208	3497	73727
Ինտերնետ միջավայրում	2369	109738	661	43347
Ընդամենը	145681	2893829	47603	1227235
այդ թվում՝ անկանխիկ	11644	377909	4207	136229

Միջազգային այլ քարտերով իրականացվել է 258189 գործառնություն՝ 16 մլրդ դրամ ծավալով, որը ավելացել է 7 մլրդ դրամով:

Քարտերով իրականացված գործառնությունների միջին օրական ծավալը կազմել է 1619 մլն դրամ, իսկ քանակը՝ 32154: 2010 թ. առաջին եռամսյակի համեմատությամբ, գործառնությունների միջին օրական քանակը ավելացել է 26%-ով (6580-ով), իսկ ծավալը՝ 37%-ով (436 մլն դրամով):

ՀՀ տարածքում շրջանառության մեջ գտնվող մեկ վճարային քարտով իրականացված ամսական կանխիկացման գործառնությունների ծավալը կազմել է մոտ 57 հազ. դրամ, իսկ անկանխիկը՝ 5 հազ. դրամ (քանակը համապատասխանաբար կազմել է 1.1 և 0.1), որը 2010 թ. առաջին եռամսյակի համեմատ գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա:

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2008 – 2010 թթ. ինչպես նաև 2010 -2011 թթ. եռամսյակների ընթացքում



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Ֆիզիկական անձանց փոխանցումները, առանց բանկային հաշվի բացման, իրականացվում են ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2011 թ. առաջին եռամսյակի ընթացքում միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 82 մլրդ դրամ (քանակը՝ 402878), որը 6.6 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Այդ համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 19%-ով (13 մլրդ դրամով): Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 203 հազ. դրամ. 2010 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 12 հազ. դրամով:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են մոտ 38 մլրդ դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 17%-ով (5.6 մլրդ դրամով), իսկ մեկ վճարման միջինը կազմել է 2.4 մլն դրամ, որն ավելացել է 0.6 մլրդ դրամով: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումները արտասահման կազմել են 45 մլրդ դրամ. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 9%-ով (3.7 մլրդ դրամով):

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով (SWIFT-ի, տելեքսի, ֆաքսի, բանկ- հաճախորդ համակարգերի միջոցով) Հայաստանի Հանրապետություն կատարված համախառն փոխանցումների ծավալը 2011թ. առաջին եռամսյակի ընթացքում կազմել է 626 մլրդ դրամ, իսկ քանակը՝ 29794 փոխանցում: Մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 21 մլն դրամ. նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ ավելացել է 8%-ով:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2011 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 11 վճարահաշվարկային կազմակերպություններ, որից 5-ը իրավունք ունեն իրականացնելու միայն դրամական միջոցների փոխանցում, մյուս 5-ը՝ վճարային գործիքների պրոցեսինգ, քլիրինգ և միաժամանակ դրամական (փողային) փոխանցումներ, ինչպես նաև «ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը:

Դրամական փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով ապահովում են արտասահմանից ՀՀ ուղղված վճարումների իրականացումը: Այդ կազմակերպությունները հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության իրենց հաճախորդներին կատարել են 0.9 մլրդ դրամի վճարում, իսկ արտասահման կատարվել է 0.08 մլրդ դրամի փոխանցում: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումները՝ 0.1%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 0.9%-ը: Այս կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումներում հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 102 հազ. դրամ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 3 հազ. դրամով:

Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 5 կազմակերպություններ մատուցում են կանխիկ միջոցներով վարձավճարների ընդունման ծառայություններ: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ վճարահաշվարկային կազմակերպությունները համագործակցել են մոտ 43 կազմակերպությունների հետ: Ընդհանուր առմամբ, վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից իրականացվում է կոմունալ վճարումների, հեռախոսի և բջջային կապի դիմաց վճարումների, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարների ընդունում և այլն:

Վճարումների ընդունումը իրականացվում է վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղադրված ավտոմատ ինքնասպասարկման տերմինալների և գրանցված մասնաճյուղերի միջոցով: Միաժամանակ, մի շարք առևտրային բանկերի մատուցվում են պրոցեսինգային ծառայություններ՝ առանձին վճարների հավաքագրման գործընթացում:

2011 թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ նշված վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվել են 718 ինքնասպասարկման տերմինալներ, որոնց միջոցով հաշվետու ժամանակահատվածում հավաքագրվել են 7.6 մլրդ դրամի (2961554 գործառնություններ) միջոցներ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ նշված ծավալն ավելացել է 57%-ով:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գործել են վճարահաշվարկային կազմակերպությունների 23 մասնաճյուղեր, որտեղ նույնպես մատուցվել են դրամական միջոցների փոխանցման ծառայություններ: Վճարահաշվարկային կազմակերպությունների մասնաճյուղերի միջոցով կատարվել է 380966 գործառնություն՝ 2.7 մլրդ դրամ ծավալով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/քլիրինգային ծառայություններ են մատուցել 11 առևտրային բանկերի համար: Այդ առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, իրականացրել են կոմունալ ծառայությունների դիմաց միջոցների հավաքագրում իրենց մասնաճյուղային ցանցի միջոցով, որտեղ կատարվել է մոտ 0.5 մլրդ դրամի չափով 82310 գործառնություն:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնը քարտերի սպասարկման սարքավորումների միջոցով ապահովել է 111 մլրդ դրամ ծավալի քարտային գործառնությունների պրոցեսինգ (2010 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 25%-ով), այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացվել է 5 մլրդ դրամի գործառնություն, իսկ ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով՝ ՀՀ այլ բանկերի պրոցեսինգային կենտրոնների միջոցով (այդ թվում նաև արտասահմանում) իրականացվել է 11 մլրդ դրամի գործառնություն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12. 09	31.03. 10	30.06. 10	30.09. 10	31.12.10	31.03.11
Բանկերի քանակը	22	22	21	21	21	21
Բանկերի քանակն ըստ կազմակերպաիրավական ձևի	22	22	21	21	21	21
ԲԲԸ	3	3	3	3	3	3
ՓԲԸ	18	18	17	17	17	17
ՍՊԸ	1	1	1	1	1	1
Կոոպերատիվ	0	0	0	0	0	0
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	21	21	21	21	21	21
այդ թվում՝ 50%-ից ավել	13	14	14	14	14	14
այդ թվում՝ 95%-ից ավել	10	11	13	12	12	12
Բանկերի կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	71.4	74.5	78.9	78.6	78.9	79.7
Վարկային կազմակերպությունների քանակը	27	28	29	32	32	31
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	15	15	15	15	15	13
այդ թվում՝ 50%-ից ավել	10	10	10	10	10	8
այդ թվում՝ 95%-ից ավել	8	8	8	9	9	6
Վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	46.5	40.9	40.3	39.9	36.3	32.5
Ապահովագրական ընկերությունների քանակը	12	12	12	11	11	11
այդ թվում՝ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	0	0	0	0	0	0
այդ թվում՝ ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	12	12	12	11	11	11
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	9	9	9	8	8	8
այդ թվում՝ 50%-ից ավել	7	7	7	6	6	6
այդ թվում՝ 95%-ից ավել	5	5	5	4	4	4
Ապահովագրական բրոքերներ	5	5	5	5	5	5
Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություն մատուցող անձինք[1]	30	30	29	29	29	29
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող անձ/բանկ/	22	22	21	21	21	21
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություն	8	8	8	8	8	8
Հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների քանակը	19	17	17	17	15	15
Գրավատների քանակը	117	118	117	123	128	
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	10	4	1	2	3	
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	2	3	2	0	2	
Փոխանակման կետերի քանակը[2]	250	252	243	253	254	
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզավորված	4	1	1	1	3	
ժամանակաշրջանի ընթացքում լիցենզիան ուժը կորցրած ճանաչված	0	4	1	0	6	
Արժութային դիլերների քանակը	2	4	3	3	2	2
Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ	10	10	9	9	10	10

[1] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մասնագիտացված անձինք 2008 թ. հունիսի 30-ի դրությամբ վերալիցենզավորվել են որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձինք:

[2] Ներկայացված են գործող փոխանակման կետերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010 թվականի I եռամսյակ	2010 թվականի II եռամսյակ	2010 թվականի III եռամսյակ	2010 թվականի IV եռամսյակ	2011 թվականի I եռամսյակ
Միջին եռամսյակային ակտիվներ[1]	1333813	1332528	1391971	1497538	1602581
Միջին եռամսյակային վարկեր	717750	746948	789388	856369	927986
Միջին եռամսյակային պարտավորություններ	1054084	1043860	1091911	1184488	1276176
Միջին եռամսյակային ավանդներ	638589	611414	612280	637781	684778
Միջին եռամսյակային կապիտալ	279729	288667	300060	313050	326405
Միջին եռամսյակային ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշ	28.8%	28.8%	28.1%	22.6%	21.6%
Միջին եռամսյակային ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	33.4%	31.6%	29.8%	29.3%	29.3%
Միջին եռամսյակային ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	140.5%	134.6%	130.5%	132.3%	138.3%

[1] Միջին եռամսյակային ցուցանիշները հաշվարկվում են եռամսյակի երեք ամիսների մեծությունների միջինացմամբ:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ[1] ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.01.2010	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	Փոփոխություն 31.03.11 – 31.12.10
Ընդամենը հաշվեկշռային կապիտալ	261419	259680	269891	278430	291355	300829	335080	34252
Կանոնադրական հիմնադրամ	188641	188641	192792	195212	203799	203799	210999	7200
Շահույթ / վնաս[2], *այդ թվում՝*	64570	62809	68868	68449	72477	81950	90001	8051
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	8577	-1781	4235	11989	20666	30046	8108	-21938
Տոկոսային եկամուտներ	114724	10227	31383	64395	98989	136161	38665	-97496
Տոկոսային ծախսեր	52925	4878	14089	28407	42945	58667	17280	-41387
Ոչ տոկոսային եկամուտներ	31746	1800	8357	17200	27655	40654	10348	-30306
Ոչ տոկոսային ծախսեր	59602	5006	15651	32347	49301	69335	18102	-51233
Այլ ծախսեր[5]	25396	3925	5765	8847	13723	18766	5522	-13244
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**1047592**	**1025141**	**1098179**	**1035545**	**1111185**	**1241521**	**1321855**	**80334**
Բանկերի թղթակցային հաշիվներ	6531	8001	10472	9821	7632	11539	7337	-4202
Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	211233	190343	192907	190907	223949	267811	283141	15331
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	87384	85847	95924	97932	118465	138279	158597	20318
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	252480	253693	274894	241966	260918	265045	283997	18952
Ժամկետային ավանդներ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	374313	366139	387103	354138	357443	408017	433339	25322
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**1325807**	**1300207**	**1383592**	**1329239**	**1417835**	**1560472**	**1656935**	**96462**
Կանխիկ դրամական միջոցներ	64673	64444	66568	64161	68727	74900	70391	-4509
Թղթակցային հաշիվներ բանկերում (ներառյալ ԿԲ)	274858	265679	291058	198963	203462	205044	227547	22503
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ)	67603	64362	54557	66866	67657	84930	77154	-7776
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16598	15176	15540	15689	17855	20561	19002	-1560
Պետական արժեթղթեր, այդ թվում	109342	108394	106748	112438	128331	151298	150803	-495
ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր						0	0	0
Այլ արժեթղթեր	4180	5581	6267	5128	6038	5695	6473	778
Վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց	703366	694685	747459	758924	810409	888612	966603	77991
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**756287**	**733654**	**784999**	**794821**	**837216**	**934383**	**1005698**	**71315**
1. Ստանդարտ	719963	682356	741064	756325	799366	905748	970014	64266
2. Հսկվող	14875	29651	23168	18337	18902	11320	20727	9407
3. Ոչ ստանդարտ	10104	15805	16047	13753	13755	11257	8498	-2759
4. Կասկածելի	11345	5842	4721	6405	5193	6057	6459	402

[1] Հաշվարկներում ընդգրկված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերը:

[2] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[3] Տվյալներում ներառված չեն ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունները:

[4] Տվյալները ներկայացնում են բանկերի հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները: Նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:

[5] Տվյալներում ընդգրկված են ակտիվների գուտ մասհանումները և շահութահարկը:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	Փոփոխություն 31.03.11 - 31.12.10
Ընդամենը հաշվեկշռային կապիտալ	26159.4	29177.1	30298.0	32320.8	35876.8	41440.9	2022.8
Կանոնադրական հիմնադրամ	19799.7	22799.7	22799.6	23883.4	25591.8	28259.1	1083.7
Շահույթ / վնաս[1], *այդ թվում՝*	5903.9	5918.6	6820.1	7891.8	9569.2	12542.7	1071.7
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	2589.9	72.0	1395.8	2610.0	4301.5	3106.2	1214.2
Տոկոսային եկամուտներ	10546.9	2724.7	5754.3	8752.3	11952.4	3476.0	2998.0
Տոկոսային ծախսեր	3291.7	902.0	1906.0	2888.6	3881.4	1003.3	982.6
Ոչ տոկոսային եկամուտներ	3768.3	955.4	1633.6	2581.5	4148.8	1335.1	947.9
Ոչ տոկոսային ծախսեր	4976.2	1256.8	2657.9	4022.6	5791.1	1753.3	1364.7
Զուտ մասհանումներ	2784.6	1340.1	1165.2	1397.4	1069.7	-1226.2	232.2
Այլ ծախսեր[2]	672.7	109.1	255.1	415.2	1057.6	174.5	160.1
Ընդհանուր պարտավորություններ[3], *այդ թվում՝*	**49573.4**	**55567.5**	**55965.3**	**53778.5**	**51229.7**	**60310.8**	**-2186.8**
Բանկերից ներգրաված միջոցներ	20357.4	21792.1	18584.8	16964.0	10045.2	16993.9	-1620.8
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	11535.3	13101.5	13105.2	12254.2	13436.0	12974.8	-851.0
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	147.4	175.8	219.6	213.8	211.5	214.2	-5.8
Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	11395.1	13159.9	14691.9	14976.3	16232.5	19654.2	284.4
Ընդհանուր ակտիվներ[4], *այդ թվում՝*	**75822.8**	**84841.6**	**86347.1**	**86183.7**	**87194.9**	**101751.7**	**-163.4**
Կանխիկ դրամական միջոցներ	663.7	600.2	185.3	180.9	246.9	276.5	-4.4
Բանկային հաշիվներ	3146.9	7169.6	4395.9	5097.9	4078.2	6347.1	702.0
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	15650.3	17927.7	20733.9	21197.7	17557.8	23419.8	463.8
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	542.9	839.1	1143.2	1292.1	1539.3	1735.9	148.9
Վարկեր	45011.1	47967.7	49831.2	49174.2	55076.3	58999.3	-657.0
Ֆինանսական վարձակալություն	5285.2	4882.7	4879.6	4822.6	4577.7	4592.2	-57.1
Պետական արժեթղթեր	2131.2	2613.5	2305.5	1041.1	744.2	451.1	-1264.4
Այլ արժեթղթեր	3.7	3.7	3.7	3.7	3.7	3.7	0.0
Վարկային ներդրումներ, *այդ թվում*	**59830.2**	**65517.0**	**70443.4**	**71277.3**	**72393.5**	**83663.2**	**833.9**
Ստանդարտ	57292.0	62540.2	68005.6	68675.5	70478.8	80940.2	669.9
Հսկվող	1468.7	1882.1	1591.7	1752.0	1080.5	1840.5	160.3
Ոչ ստանդարտ	575.8	622.8	426.4	554.2	421.1	583.1	127.8
Կասկածելի	493.6	471.9	419.7	295.5	413.1	299.3	-124.3

[1] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:
[2] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:
[3] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր պարտավորությունները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև այլ պարտավորությունները, ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունները և հաշվարկված վճարվելիք տոկոսները:
[4] Տվյալները ներկայացնում են վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ընդհանուր ակտիվները, որտեղ, վերը նշված տողերից բացի, ընդգրկված են նաև նյութական ակտիվները և այլ պահանջները, հաշվարկված ստացվելիք տոկոսները, սակայն նվազեցված են ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի և արժութային սվոփով ձեռք բերված արժույթի գծով պարտավորությունների չափով:
[5] Ն1[1] նորմատիվի հաշվարկում ընդգրկված են միայն այն վարկային կազմակերպությունների տվյալները, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, հրապարակային օֆերտայի միջոցով ներգրավում են փոխառություններ:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	Փոփոխություն (31.03.2011)-(31.12.2010)
Դրամական միջոցներ	239	19	34	32	331	127	-205
Բանկային հաշիվներ	1775	1164	1358	2276	3320	1678	-1642
Ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	1761	1655	2254	2141	2249	3165	916
Վերաապահովագրողների բաժինը ապահովագրական պահուստներում	0	0	0	0	0	1733	1733
Հատուցումների գծով պահանջներ	165	114	86	165	222	380	158
Ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ	8957	10271	9886	9995	12789	15066	2277
Ոչ ընթացիկ ավանդներ և այլ ներդրումներ	1635	861	548	837	816	844	28
Տրամադրված փոխառություններ	132	455	574	1531	705	861	156
Արժեթղթեր	1243	1236	1235	1446	2611	3412	802
Դեբիտորական պարտքեր	565	389	613	714	1426	1673	247
Հիմնական միջոցներ	624	711	713	763	1123	1482	359
Հնարավոր կորուստների անհավաքագրելիության պահուստներ	-311	-250	-228	-315	-338	-448	-110
Այլ ակտիվներ	179	185	168	115	260	1882	1621
Ընդամենը ակտիվներ	**16964**	**16809**	**17239**	**19702**	**25515**	**31854**	**6339**
Դրամ	6937	6639	7702	9213	16160	21920	5760
Արտարժույթ	10027	10170	9537	10489	9355	9934	579
Վճարվելիք գումարներ ապահովագրական հատուցումների գծով	20	18	43	108	91	90	-2
Համաապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք գումարներ	1579	896	1735	1435	1818	1199	-620
Ընթացիկ փոխառություններ և վարկեր	0	0	70	1107	103	0	-103
Ապահովագրական պահուստներ	2719	2837	2865	2917	2913	13519	10606
ՉԱՊ	2051	2207	2214	2163	1997	11612	9615
Պահանջների պահուստ	536	481	483	559	607	1586	978
Մաթեմատիկական պահուստ	0	0	0	0	0	0	0
Այլ պահուստներ	132	149	168	195	309	322	13
Կրեդիտ. պարտքեր բյուջեի և պարտադիր սոց. ապահովագրության վճարումների գծով	105	91	94	91	124	168	44
Ոչ ընթացիկ փոխառություններ և վարկեր	0	0	0	0	0	0	0
Այլ պարտավորություններ	255	738	944	1428	7906	1981	-5925
Ընդամենը պարտավորություններ	**4678**	**4580**	**5751**	**7086**	**12956**	**16957**	**4001**
Դրամ	3325	3913	4468	5134	11611	16376	4765
Արտարժույթ	1353	667	1283	1952	1345	581	-764
Կանոնադրական կապիտալ	10938	10654	9654	10985	12116	13476	1360
Ընթացիկ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	776	363	11	-152	-945	1008	1953
Նախորդ ժամ.-ի չբաշխված շահույթ/վնաս	336	868	1385	1386	892	-88	-980
Այլ	235	345	438	397	496	501	5
Ընդամենը սեփական կապիտալ	**12286**	**12229**	**11488**	**12616**	**12559**	**14897**	**2338**
Այլ ցուցանիշներ							
Ապահովագրական գումարներ	3386642	3344961	2968127	3250344	3052439	6916981	3864542
Ապահովագրավճարների համախառն մեծությունը	8103	1898	4786	6582	8253	12614	4361
Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	4036	582	2427	3074	4010	-446	-4457
Ապահովագրական հատուցումների համախառն մեծությունը	1901	355	782	1324	1746	1159	-587
Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում	891	114	223	415	535	-204	-739

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2009	31.03.2010	30.06.2010	30.09.2010	31.12.2010	31.03.2011	Փոփոխություն (31.03.2011) - (31.12.2010)
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	**2936.3**	**2921.0**	**2787.5**	**2929.4**	**3196.2**	**3470.4**	**274.2**
Չբաշխված շահույթ (վնաս), այդ թվում՝	317.6	381.4	223.4	328.0	416.9	649.9	233.0
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	210.6	98.3	29.7	205.5	295.8	252.3	-43.6
Միջնորդավճարներ և եկամուտներ ՆՕ մատուցումից	50.8	5.5	12.1	16.7	24.4	240.0	215.6
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	2416.5	234.4	914.8	1234.8	1560.5	917.2	-643.3
Կանոնադրական կապիտալ	1755.8	2280.6	2318.2	2351.9	2514.8	2578.8	64.0
Ընդհանուր պարտավորություններ	**12636.6**	**10977.1**	**12365.9**	**14021.1**	**16359.9**	**15128.5**	**-1231.3**
Ռեզիդենտ բանկերից ներգրաված վարկեր	1541.1	802.0	620.7	325.2	2017.6	1458.0	-559.6
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	10402.8	9581.7	11246.0	13197.2	13879.6	13370.7	-509.0
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ	**15572.9**	**13898.1**	**15153.4**	**16950.5**	**19556.1**	**18599.0**	**-957.1**
Կանխիկ դրամական միջոցներ	166.1	177.9	184.2	189.3	200.2	208.0	7.9
Բանկային հաշիվներ	581.5	270.6	406.1	274.0	233.4	507.2	273.8
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	10534.1	9858.6	11488.8	13404.0	14180.6	13619.6	-560.9
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պետական արժեթղթեր	1116.6	1232.1	859.5	766.4	1713.4	2416.3	702.9
Այլ արժեթղթեր	1363.5	747.3	896.2	795.5	886.8	905.7	18.9

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՋԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2010				2011
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	I եռ.
ՆԲ կողմից կնքված գործարքներ	**326718.0**	**328568.5**	**229798.0**	**114739.2**	**266369.1**
բաժնային արժեթղթեր	1741.0	2021.0	2946.3	547.6	2812.5
այդ թվում՝ բորսայական	0.0	10.3	7.7	-	3.2
կորպորատիվ պարտատոմսեր	460.2	526.8	82.5	242.3	4.0
այդ թվում՝ բորսայական	329.4	525.3	77.3	2.1	4.0
պետական պարտատոմսեր	42546.8	44406.5	69378.9	44284.7	81936.7
այդ թվում՝ բորսայական	1927.4	1413.9	5202.1	825.3	2824.2
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	281970.0	281614.2	157390	69665	181616
այդ թվում՝ բորսայական	1372.4	822.8	658	621	436
ՆԸ կողմից կնքված գործարքներ	**41637.3**	**44730.2**	**53622.8**	**23125.4**	**42851.4**
բաժնային արժեթղթեր	44.7	82.5	27.6	49.4	388.6
այդ թվում՝ բորսայական	2.5	11.9	14.6	19.4	170.0
կորպորատիվ պարտատոմսեր	1170.1	799.9	944.5	119.7	224.8
այդ թվում՝ բորսայական	1149.9	780.6	936.6	119.7	203.0
պետական պարտատոմսեր	4474.0	5577.8	7897.9	5121.8	5675.5
այդ թվում՝ բորսայական	324.8	30.7	453.2	-	-
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	35948.4	38270.1	44752.8	17834.4	36562.5
այդ թվում՝ բորսայական	1131.9	920.8	775.8	621.0	435.7

[1] Ռեպո/հակադարձ ռեպո գործարքները չեն ներառում երկարաձգումները:

ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(2011 թ. մարտի 31-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	31.03.11	*31.12.10*
Ակտիվներ		
Ակտիվներ արտարժույթով		
Դրամական միջոցներ	7,681,141	7,552,047
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	157,930,327	158,102,101
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	353,428,779	404,632,917
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	917	917
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	143,405,674	95,678,521
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	65,572,471	63,670,237
Այլ ակտիվներ	956,331	874,492
	728,975,640	**730,511,232**
Ակտիվներ տեղական արժույթով		
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	68,350,348	70,615,499
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	92,689,719	88,705,765
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	4,200,846	4,132,916
Հիմնական միջոցներ	26,421,051	26,312,189
Ոչ նյութական ակտիվներ	585,031	583,179
Այլ ակտիվներ	8,399,086	3,752,261
	200,646,081	**194,101,809**
Ընդամենը ակտիվներ	**929,621,721**	**924,613,041**
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ արտարժույթով		
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	91,132,927	99,650,034
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	3,928,460	3,989,112
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	86,198,942	82,284,509
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	4,023	19,478
Այլ փոխառություններ	29,337,960	27,599,809
Այլ պարտավորություններ	185,101	146,096
	210,787,413	**213,689,038**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	312,419,975	348,164,734
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	111,990,331	80,825,771
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	101,877,955	106,545,573
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	205,044,896	195,802,721
Այլ պարտավորություններ	1,196,985	1,353,894
	732,530,142	**732,692,693**
Ընդամենը պարտավորություններ	**943,317,555**	**946,381,731**
Սեփական կապիտալ		
Թողարկված կապիտալ	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	17,389,049
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	85,663,194	85,663,194
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	(1,707,073)	(1,628,760)
Կուտակված վնաս	(115,141,004)	(123,292,173)
Ընդամենը սեփական կապիտալ	**(13,695,834)**	**(21,768,690)**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**929,621,721**	**924,613,041**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2011 թվականի մայիսի 24-ին և ստորագրվել:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2011 թ. 1-ին եռամսյակ (ներառյալ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբը	**ՀՓԻ**		**ԱՄՆ դոլար**
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,865,845,815.47
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,865,845,242.88
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	21,755,714.00		33,504,555.42
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Ձուլ արտաքին ակտիվներ			1,165,960,546.40
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,165,959,973.81

Եռամսյակի վերջ			
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,823,443,175.87
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,823,442,611.95
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	19,873,717.00		31,509,871.35
պահուստային դիրք ԱՄՀ-ում	0.00		0.00
II. Ձուլ արտաքին ակտիվներ			1,101,748,095.43
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,101,747,531.51

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2011